խմբասին ընդ յիշեալ ուսուցչին մերոյ ոչ միայն ջանադիր եղեալ են 'ի բարեկարգել և բարձրել զընթացս ուսման Դպրոցիս և պահպանել անսասարեալ զսահմանեալն կարգ, այլ և յետ քանիցս անգամ 'նուիրելոյ աշակերտաց զհարկաւոր գրեանս և զհանդերձեղէնս, յայս վերջին նուագ ևս 'ի գալստեան Սրբազան Առաջնորդի վիճակիս ոչ զլացան երեքն 'ի նոցանէ Պետրոսն և Մանուէլ Խոմճեանք և Սահմանոս Զորջոփեան յիւրեանց սեպհականութեանց պատրաստել վասն բոլորեցունց միատարազ զգեստս՝ յորս ծախեցին աւելի քան զհարիւր բուրլիս արծաթ։

Հրապարակական հարցաքննութիւն աշակերտաց Դպրոցիս եղև յԶն յուլիսի այսր ամի 'ի ներկայութեան Սրբազան Թեմական Առաջնորդի և բազմաթիւ ժողովրդականաց՝. և յընթացս միոյ և կէս ամի գտին զաշակերտս Դպրոցին յառաջացեալ յուսմունս առաւել քան զարժանն, մինչ զի յետ ընդունելոյ զբերանացի գովաբանութիւն Սրբազան Առաջնորդի՝ Հոգաբարձուք և Ուսուցիչ Դպրոցիս արժանացան առանձինն և գրաւոր շնորհակալութեան։

Եւ քանզի սկզբնապատճառ այսր ազգային յառաջադիմութեան և Աստուածահաճոյ բարենպատակ գործոյս վերաբերի և եթ Զերդ Վեհափառութեան՝ զոր իրրև արեգակնային կենդանացուցիչ ճառագայթս ծաւալեցիք 'ի վերայ ազգատս մանկտւոյս մերոյ զդութ խնամոյ բարերարութեան Ձերոյ, վասն որոյ թողուլն զայս ամենայն զանխուլ 'ի Զերդ Վեհափառութենէ վարկանիմք ոչ 'ի զեպ. ամենիրի զորդիական երախտագիտութիւնս մատուցանելով առ սրբանելաւ գարշապարս Մեծի Խնամակալիդ Հայաստանեայցս Եկեղեցւոյ՝ յայտ առնեմք ամենախոնարհաբար զհանդգնամանաց ծխական Դպրոցի Սուրբ Համբարձման եկեղեցւոյս, զարգիւնաւոր դասախօսութիւն ուսուցչի Յովհաննու քահանայի Տէր Գարրիէլեան, զկարգապահ բարեկարգութիւն և զբարեպաշտական նուիրագործութիւն Հոգաբարձուաց նորին, և հայցեմք առ իրաքանչիւր 'ի նոցանէ դարձուցանել զհայրական քաղցր ակնարկութիւն՝ իրրև առ աննենդ և անխարդախ ծառայողս ազգային օգտի, որովք դոցուք մեք մխիթարեալք, եղեցի Հայրապետական սուրբ անօրէնութիւն Ձերդ Վեհափառութեան քաջալերութիւն և այլոց 'ի սոյն օրինակ յանխոնջ աշխատութիւնս վասն ազգային լուսաւորութեան։

Յանձն առնելով զմեզ սրբանուէր աղօթից և հովանաւորութեան Վեհափառ Հօրդ մերոյ, մնամք որդիական պատկառանօք և վերապատուութեամբ

Ձերդ Վեհափառութեան՝ Մեծի Խնամակալիդ Հայաստանեայցս Եկեղեցւոյ

'Նուաստ և անձնանուէր ծառայք.

(Պոլսոյ-ին 15 ՄԷյին)։

. . . Խմբագրոն Արարատ Մամագրոյ

Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն Գէորգայ հրամանաւ տպագրուած Աղգաշահ կանոնաց միտքն ու բովանդակութիւնն, որպէս Երևանայ 'Նահանգի ամենայն դաւառների և գաւառիկների Գաղաքայ և գիւղօրէից մէջ, նոյնպէս և Արմաւիրայ գաշտի գիւղօրէից մէջ (Պոլսոյ պատգամ Գ-ա-ա-կի) տարածելոյ համար և միանգամայն ծանօթացնելոյ տեղւոյն Հայ-Բրիստոնեայ հասարակութեանն 'Նո-

լին Ս. Հոգեւորութեան բարենպաստակ գործոյն և յառաջադրութեանցն, որ Եկեղեցեաց պայծառութեան և բարեկարգութեան համար են, և Եկեղեցական Դպրոցաց հաստատութեան և բարեզարդեալ կառավարութեան համար, և Ս. Իմաստասէրին գործոց և արդեանց, երբ պատահեցի և մեր հին Երմանիր երբեմն մեծահռչակ Քաղաքին, որ Աստուծոյ անքննելի տնօրէնութեան թոյլտուութեամբն խոնարհած մինչ իսպառ՝ դարձել է մի փոքրիկ գիւղ "Թափաղիպ" անուանով, որ է պարսկական բառ և նշանակէ "Ջրի Ներքև", բայց փա՜ռք Աստուծոյ, որ բնակիչքն դեռ ևս Հայ-Քրիստոնեայ են, ինչպէս Ս. Աղաքշապատին, Երուաշատայն, և Դմիտրոյն. և այն ինչ (համաձայն պաշտօնական պարտաւորութեանս և ըստ հետաքրքրական բուն բնաւորութեանս շրջագայելի 'ի Հայաբնակ գիւղօրայս Երմանրայ Դաշտի (Ամբարպաշ Դաշտէն) պաշտօնական գործերս աւարտելոյ յետոյ ցանկացայ և մեր Երմանիր հին քաղաքատեղւոյ միջնավայրի բլրի գագաթն ելնել, և շինուածոց հետքն և յիշատակարաններն որոնել, գտնել, և տեսնել. ուստի և մի քանի քահանայից և իշխանաց հետ միասին Թափաղիպի և Ս. Բուրդուղուլի գիւղերից գնալով բարձրանալով մեր ելանք բլրի ծայրը, ուր բաւական հանգստանալով կ'խորհրդածէինք մեր նախնի փառաց և հարստութեանց վերայ, կ'խորհրդածէինք որ երբեմն մեր հզօր և յաղթօղ Թագաւորներն և Թագաւորութիւնքն մանաւանդ Նահապետացն Երմենիայ Երայի և այլոց, և Թագաւորացն Երուանդայ և միւսոց ժամանակներն՝ իւրեանց փառաւոր Աթոռներն այս բլրի վերայ բաղմեցնելով և արքունիքն այս տեղ հաստատելով կ'խրոխտային Աստուծոյ, Պարսից, և Արաբաց Թագաւորութեանց վերայ, կ'խորհրդածէինք, որ երբեմն Հայաստան իւր Աստուածապաշտ և Քրիստոսապաշտ միջոցներին փրկութեան յոյսը յԱստուած հաստատելուց զկնի՝ այս բլրի վերայ ամրացուցեր է իւր մարմնաւոր զոյութիւնն, կ'խորհրդածէինք վերջապէս, որ այս բլուրն որ շրջապատուին հանդերձ Երմանիր անուն կ'կրէ*, երբեմն Հայոց Աղգութեան երևելի Քաղաքն լինելով՝ նշանաւոր նահապետաց և Թագաւորաց Արքունիք եղած է և հանդիսարան, ժամանակի ժանիքներէն ծախուելով՝ այժմ ոչ ասիճանի ամայութեան մէջ է մնացեր և աւերակութեան, մինչև ցաւօք սրտի ասեմ, հաղիւ այնքան մեծագործ և մեծաշէն շինուածքներէն փոքր մի նշմարանք կ'երևէին և այն սեւացած այրված և մաշված քարեր և քարափներ։

Այսպէս շատ ու շատ խորհրդածելուց և Աղգային փառաց ու պատմութեանց վերայ խօսելուց զկնի՝ վերադարձանք բլրի միւս կողմին դէպ 'ի Թափաղիպի գիւղն. և երբ հետաքրքրութեամբ կ'նայէինք կուած - կոփած այս տեղ այն տեղ թափած քարերին, որ մի նշանագիծ գոնէ կարողանայինք գտնել մեր նախնեաց յիշատակարաններից, յանկարծ երևեցաւ մի սեւագոյն կոփած մեծագիր քարի վերայ նշանագրեր, և երբ ուրախութեամբ սրտի մտեցայ նրան կարդալոյ, տեսի որ 13 տողից բաղկացած բեւեռագրեր էին, որ ձևոց և չափուց գրութեամբն ըստ ամենայնի համեմատ էին այն սոյնանման գրուածոյ հետ, որ 1862 և 63 թուերին օրինակեցի Նոր Բայազդու գաւառի Աղամխան և Ալիչալու գիւղերից մօտ գտնուած

*) Նոր Բն. Ա. 11. եւ Բ. 46։

քարափներէ վերայից, և Մանաւանդ Կոստանդնոյ կողմանց Էլան զիւղն մօտ եղած քարափան վերայից, որպէս և Մոսկուայի Համբաւաբեր Հայկական Լրագրի քանի թերթերի էջերի մէջ տպագրուեցան 1862 և 63 թուականը, և նոյն իսկ երեք օրինակաց ձեւակերպութիւններն մի մեծագիր թերթի վերայ Վիմագիր գործարանով օրինակեցան։

Այս Արմաւիրեան բեւեռագրոց նոյն և նման օրինակն ահա անսխալ օրինակելով այս իմ համառօտ խորհրդածութեանս յօդուածոյ հետ միասին ուղարկեցի տպարանական կառավարութեանդ և յառակապէս Խմբագրոյ-Ընկերոյ, որ Արարատ պատուական Ամսագրի թերթերի վերայ տարածանելով ծանօթացնէք Ազգի ուսումնական Անդամոց. որպէս զի աշխատակրութեամբ՝ կամ լաւ է ասել՝ ընկերութիւն կազմելով կարողանան բացատրել որպէս այս նշանագրոց միտքը, նոյնպէս և միւս 1862 և 1863 թուերի գտնուած բեւեռագրոցն, որով գուցէ Ազգային պատմութեանց հնագոյն և մթնագոյն մասանցն կարողանան լոյս տալ և քանի կարծիքաւոր աւանդութեանցն, զորս Խորենացին՝ մեր պատմութեան Վերթողահայրն՝ կառնու Ազգային աւանդութիւններից և վիպասանաց երգերից*։

Արմաւիրայ դաշտի Հայ-Արիստոնեայք յիշատակեալ բեւեռագրերով զարդարուած սեւագոյն քարին ըստ որում "Սոբէ Լոսոսորի հանգուցեալն" անուանելով, (այսինքն Լուսաւորիչն այս տեղ հանդիպած միջոցին՝ նստելով այն քարի վերայ՝ ըստ ասութեան բնակչաց երկրիս՝ հանդուսակ է իբրու թէ փոքր ինչ, երբեմն երբեմն միմիայն խուսկ ու մամով կ'պատուին. վասնոր այս կարգադրեցի և յանձնեցի Արժանապատիւ Սոփոկ և Սանփանոս քահանայից Արմաւիրեցւոց, որ խնամքով հասուցանեն 'ի Սուրբ Էջմիածին. ուր զնանելով նորահաստատ Թանգարանի մէջ ընդ այլ նշանաւոր հնութեանց ցոյց տան երեւելի այցելուաց. որպէս զի մեր Արմաւիր Քաղաքի հնութեանց յիշատակներից զոնէ մի նշանն անկորուստ պահպանեմ. . .

Ա՛ռ այս և կամենալով Հայերի սրտերի մէջ քաջ տպաւորել տալ նախնեաց յիշատակարաններն որպէս և Արմաւիր քաղաքի տեղն ու զրութիւնն, և նորա մէջ բնակիչ մեծագործ Կայհապետաց և Թագաւորաց անուանքն ու գործքերն, զնել տուեցի այն բլրի վերայ փոխանակ անշնան քարերի՝ մի կոփածոյ մեծագիր խաչքար(*). որպէս զի ըստ սովորութեանն ժողովուրդք գնալով այն տեղ՝ երկրպագանեն նշանին սրբոյ Խաչին. որով և տեղին պատուած համարուի Ազգին. որպէս և ես մին Ազգայնոց նոյնպէս գնացի և պատուեցի, և իբրև խուսկ ու մամի նուէրք՝ այս սակաւատող գրուածքս աշխատասիրեցի 'ի փառս և 'ի պատիւ Սրբոյ Խաչին և Խաչելեալ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ազգաշահ ուսումնական աշխատակրութեանդդ միշտ յաջողութիւն ցանկանալով մնամ խոնարհ աղօթարար

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆՑ։

Սեպտեմբեր 1869

ՅԱՐՄՈՒՐ։

(* Տորեն. Ա. զիրք ժդ։

(* ԱՅՍՊԻՍԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵՄԲ

"Ի Կայսերական Ինքնային Ռուսաց Ր. Աղէքսանդր Նիկոլայեւիչ. Հրամանաւ Տեառն Գէորգի Գ. Կարոնովիսկի ազգային Հայոց՝ Կանգնեցաւ Սոբէ Խուսը 'ի պաշտպանութիւն երկրին՝ վերակացութեամբ Փոխ-Թեմական Արքանայ Ղահանդի Մեսրոպի Լազարեանց և աշխատակցութեամբ Սովէոն և Սարգիսանոս Քահանայից Արմաւիրեցւոց. յամի Տեառն 1870"։



Ծանօթութիւն. Կարծւում է, որ այս բևեռաձև կամ սեպաձև գրերը գործ էին դնում Պարսից տէրութեան հպատակ բոլոր գլխաւոր ազգերը: Ուսումնականները կարողացել են տարբերել (որոշել) մինչև հինգ տեսակ այսպիսի գրերի — ախեմենիդական (բուն պարսկական, որ և ամենահինն է) միդիական, ասորական, բաբելական և սուզիական (сузскій): Առաջին տեսակը տեսնւում է Պերսեպոլսի յիշատակարաններու վերայ և Բեհիստունի արձանագրերու մէջ: Լասսեն և Բիւռնուֆ, Րաւլինսօն, Բէնֆէյ և Օպպերտ ուսումնականաց աշխատութեան շնորհիւ այժմ այդ գրերը կարդացւում են: Բայց միւս տեսակները որոնք պատահում են Նինուէի և Բաբելոնի աւերակներումը, մինչև այս օրս տակաւին չեն բացատրուած: (Толль. Настольный Словарь. տե՛ս *Гвоздеобразная грамота*)

Մենք սորա մայրերը շինելու և շարելու ձեռնտու ունէինք Պետերբուրգի Գիտութեան Ակադեմիայի տպարանում տպուած գրաշարների և սրբագրողների համար [illegible] [illegible] որոյ սկզբունքը նոյն այս գրերն են դրուած Պետերբուրգեան [illegible] փորագրով: Հնայելով, որ նորա մէջ բացատրուած էին այդ տառերի հնչիւնները, սակայն մենք չկարողացանք սորանից հնչիւններ կազմել, որ եթէ կազմէինք էլ՝ գուցէ դարձեալ չկարէինք հասկանալ, եթէ խօսքերը հայերէն չլինէին: Ուստի տպագրելով սորա պատկերը հնախոսաց հետաքրքրութեան համար, մենք կը ցանկայինք մի և նոյն ժամանակ, որ մեր այն ազգակիցները, որոնք մայրաքաղաքներում լինելով մօտ յարաբերութիւն ունին երևելի ուսումնականաց հետ, զանց չառնէին նոցանից խնդրել մի բան և հաղորդել Արարատ ամսագրոյս խմբագրութեանը: